ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԱՐՏԱՇԱՏԻ ԽՃՈՒՂՈՒ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՄԱՆ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Արտաշատի խճուղու վերգետնյա անցման վրա տեղադրվող գովազդային միջոցների սպառման համակարգերը (այսուհետ՝ Սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված՝ «Արմադա Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորված անձ Արշակ Արիստակեսյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի ապրիլի 1-ի դիմումը,

բ) որ Սպառման համակարգերն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում են Դիմող անձի դիմումի հիման վրա՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չեն առաջացնում,

գ) որ Երևանի քաղաքապետարանը, համաձայն իր 2021 թվականի ապրիլի 2-ի №52/39081 գրության (այսուհետ՝ Գրություն), չի առարկում Ընկերության էլեկտրական ցանցին Սպառման համակարգերի միացմանը,

դ) Ընկերության սույն թվականի մայիսի 10-ի №Ե-181-21-ի և Դիմող անձի 2021 թվականի մայիսի 3-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգերի՝ էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների

13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4 կետով սահմանված կարգով՝ տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Գրությունը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մայիսի 2021 թ.